նիսեանը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ՝ Հ. Մելքոնեանը, Երևան քաղաքի ներկայացուցիչ Ա. Շարաֆեանը, Կարսի քաղաքագլուխ Հ. Նոհրատեանը, Նոր-Բայազէտի քաղաքագլուխ Վ. Աֆրիկեանը, Ա. Խոնդկարեանը սոց.-յեղ. և Ա. Ղազարեանը՝ Հ.Յ.Դ. կուսակցութիւնների կողմից և մի շարք ուրիշ հիմնարկութիւնների ու միութիւնների ներկայացուցիչներ: Յայտարարուեց ցանկը համալսարանին արուած նէրների. մէկ միլիոն ռուբլի Մայիլեան եղբայրներից, 100,000ռ. «Շիրակ» կոօպերատիւից. Ալեքսանդրապոլում սկսուել էր ժողովրդական հանգանակութիւն: Հանդէսի օրւայ առթիւ հրատարակուել էր միօրեայ թերթ «Հայաստանի Համալսարան» անունով:

Հանդէսի ամբողջ տևողութեան ընթացքին, դուրսը խռնուած էր հսկայական բազմութիւն. շատերը եկել էին շրջակայ գիւղերից: Հասարակութիւնը խանդավառ ցոյցերով ընդունեց հանդէսից յետոյ դուրս եկող հիւրերին: Այստեղ ևս խօսեցին օտար պետութեանց ներկայացուցիչները, վարչապետ Խատիսեանը, Հ. Յ. Դաշնակցութեան կողմից Ս. Վրացեանը և ուրիշներ: Հաւաքւած բազմութիւնը հանեց մի բանաձև, որով պահանջում էր դաշնակիցներից Թիւրքահայաստանի հարցի լուծումը:

Հանդէսից յետոյ, Քաղաքային Ակումբի դահլիճում տեղի ունեցաւ ճոխ հացկերոյթ քաղաքագլուխ Հ. Մելքոնեանի նախագահութեամբ, ուր նոյնպէս եղան բազմաթիւ ճառախօսութիւններ հայ և օտար ներկայացուցիչների կողմից: Երեկոյեան, Առևտրական դպրոցի սրահում, կայացաւ դրական-երաժշտական երեկոյթ և պարահանդէս, որ մեծ աշխուժութեամբ անցաւ և տևեց մինչև ուշ գիշեր: Պարահանդէսից յետոյ հիւրերը արտակարգ գնացքով վերադարձան Երևան:

Խոշոր դէպք էր և Հայաստանի բժիշկների անդրանիկ համագումարը, որ բացուեց Երևանում ապր. 18-ին: Քաղաքային տան դահլիճը լիքն էր Հանրապետութեան բոլոր ծայրերից եկած պատգամաւոր բժիշկներով, բուժակներով, դեղագործներով, անասնաբոյժներով, ունկնդիր հասարակութեամբ: Եկել էին 72 պատգամաւորներ:

Համագումարը բաց արաւ կազմակերպիչ յանձնաժողովի նախագահ բժ. Յ. Տէր-Միքայէլեանը: Ապա ողջոյնի խօսք ասացին Խորհրդարանի նախագահ Ա. Սահակեանը, վարչապետ Խատիսեանը, Երևանի քաղաքագլուխ Մուսինեանը և բազմաթիւ ներկայացուցիչներ զանազան հիմնարկութիւնների և միութիւնների կողմից:

Հանդիսաւոր մասից յետոյ համագումարը կազմեց իր նախագահութիւնը—նախագահներ՝ բժ. Տէր-Միքայէլեանը, Պալիկեանը և Լազարեանը, քարտուղարներ՝ Զարիֆեան, Բաղդասարեան, Աւալեան, Տէր-Պողոսեան, Աւետիսեան, Քալանթարեան:

Յաջորդ օրը, համագումարը բաժանուեց 5 հատուածի—1) քաղաքական հարցերի՝ 29 բժիշկ, 2) զինուորական՝ 20, 3) դեղագործական՝ 13, 4) անասնաբուժական՝ 4 և 5) ատամնաբուժական՝ 3 — և օրակարգի հարցերը քննութեան առնուեցին այդ հատուածների նիստերում: